ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը ավանդաբար եղել և հատկապես վերջին տարիներին հանդիսանում է երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը:

Ոլորտը կարևոր նշանակություն ունի երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման, մակրոտնտեսական կայունության ապահովման, արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավման, գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ձևավորման, գյուղական բնակավայրերի կայունության ու զարգացման և ամենակարևորն է երկրի պարենային անվտանգության ապահովման համար:

Վերջինիս մասին են վկայում ներկայացվող հետևյալ մի քանի ամփոփ ցուցանիշները:

Գյուղատնտեսությունում 2011-2015թթ. ձևավորվել է երկրի համախառն ներքին արդյունքի 18.6 %-ը, իսկ ագրովերամշակող ոլորտի հետ միասին՝ գրեթե 25.0 %-ը:

2015թ. տվյալներով գյուղատնտեսությունում զբաղված են հանրապետության ընդհանուր զբաղվածների 35.3 %-ը: Գյուղական բնակավայրերում բնակվում են հանրապետության բնակչության 36.4 %-ը:

Տեղական արտադրության հաշվին, էներգետիկ արժեքով գնահատված, ապահովվում է առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ավելի քան 60 %-ը:

Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության մեջ, 2015 թվականի տվյալներով, գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմել է 22.2 %, իսկ միայն արտահանման մեջ՝ 26.2 %, 2010թ. այդ նույն ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 17.6 և 16.4 %, այսինքն ակնհայտ է ոլորտի արտաքին ապրանքաշրջանառության բարելավման միտում: Գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության բարելավման կարևոր վկայություններից է նաև այն, որ դրանց արտահանման և ներմուծման հարաբերակցությունը 2010թ. կազմում էր 1:4-ի, իսկ 2015թ. տվյալներով այն էականորեն բարելավվել է և այդ հարաբերակցությունը դարձել է 1:1.7-ի:

Գյուղատնտեսության տնտեսավարողների ջանքերով և իրականացված պետական աջակցության ծրագրերի արդյունքում 2011-2015թթ. ոլորտում գրանցվել է տնտեսական աճ, որի վերաբերյալ տվյալները ներկայացվում է ստորև:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը (ընթացիկ գներով) և գյուղատնտեսական արտադրանքի ծավալի ինդեքսը 2010-2015թթ.

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընթացիկ գներով, մլրդ դրամ	636.7	795.0	841.5	919.1	993.5	1002.2
Գյուղատնտեսության ծավալի ինդեքսը (տնտեսական աճը), %	86.4	113.9	109.5	107.1	107.2	111.7

2015 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 1002.2 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 11.7 %-ով: 2012, 2013 և 2014թթ. գյուղատնտեսության ոլորտում տնտեսական աճը կազմել էր համապատասխանաբար՝ 9.5, 7.1 և 7.2 %:

Գյուղատնտեսությունում դրական տեղաշարժերը հնարավորություն են տվել էականորեն մեծացնել երկրի տնտեսական աճի մեջ ոլորտի նպաստման չափը: Այսպես, 2014թ. երկրի ՀՆԱ-ի 3.6 % հավելաճի 1.1 տոկոսային կետը կամ 30.6 %-ը բաժին էր ընկնում գյուղատնտեսությանը, իսկ 2015թ. երկրի ՀՆԱ-ի 3.0 % հավելաճի 2.4 տոկոսային կետը կամ 80.0 %-ը եղել է գյուղատնտեսության մասնաբաժինը:

Ընթացիկ տարում, չնայած որոշակի անբարենպաստ բնակլիմայական պայմաններին, նույնպես առկա են որոշակի դրական տեղաշարժեր, մասնավորապես 2016թ. հունվար-մայիս ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը կազմել է 4.7 %:

Գյուղատնտեսության տնտեսական աճի հետ մեկտեղ կարևորագույն ձեռքբերումներից է ոլորտի հիմնական ռեսուրսի՝ գյուղատնտեսական հողերի օգտագործման մակարդակի բարձրացումը: Մասնավորապես, զգալիորեն ավելացել են ցանքատարածությունները և արդյունքում՝ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2010-2015 թվականների ընթացքում ավելացել են 68.2 հազ. հեկտարով, միայն 2015 թվականին՝ 19.0 հազ. հեկտարով և կազմել են 351.8 հազ.

հեկտար: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.8 %, 2014 թվականի 74.4 %-ի և 2010 թվականի 63.2 %-ի դիմաց:

ՀՀ վարելահողերի նպատակային օգտագործման միտումների փոփոխությունը 2010-2015 թվականների տվյալներով

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Վարելահողերի տարածքն ըստ հողային հաշվեկշռի, հազ. հա	448.5	449.2	448.4	448.2	447.5	446.7
Ընդամենը ցանքատարածությունները, հազ. հա	283.6	286.7	304.2	318.1	332.8	351.8
Ոչ նպատակային օգտագործվող վարելահողերը, հազ. հա	164.9	162.5	144.2	130.1	114.7	94.9
Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %	63.2	63.8	67.8	71.0	74.4	78.8

Ցանքատարածությունների ավելացման միտումը շարունակվում է նաև ընթացիկ տարում:

Բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի վերջին տարիների միտումների համառոտ բնութագիրը հետևյալն է:

<u>Բուսաբուծություն</u>

2010-2015թթ. բուսաբուծության համախառն արտադրանքի արժեքի, արտադրանքի ծավալի ինդեքսի և գյուղատնտեսության մեջ դրա տեսակարար կշռի բնութագիրը ներկայացվում է ստորև:

ՀՀ բուսաբուծության համախառն արտադրանքի (ընթացիկ գներով) արժեքի, արտադրության ինդեքսի և գյուղատնտեսության նեջ դրա տեսակարար կշռի 2010-2015թթ. ցուցանիշները

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Բուսաբուծություն, մլրդ դրամ	392.7	465.1	516.0	572.8	605.7	606.2
Տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի մեջ, %	61.7	58.5	61.3	62.3	61.0	60.5
Բուսաբուծության ծավալի ինդեքսը, %	79.7	126.6	114.0	106.6	106.9	115.2

Ներկայացված տվյալներից երևում է, որ բուսաբուծության համախառն արտադրանքի արժեքը ընթացիկ գներով 2010թ.-ի 392.7 մլրդ դրամից 2015թ.-ին հասել է 606.2 մլրդ դրամի: Դիտարկված տարիներին բուսաբուծության տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի կառուցվածքում միջին հաշվով կազմել է 60.9 %:

Բուսաբուծության համախառն արտադրանքը 2011թ.-ից սկսած ունեցել է բարձր աճ, 2011-2015թթ. միջին տարեկան տեմպը կազմել է 13.9 %: 2013 և 2014թթ. համեմատաբար ցածր տեմպերը պայմանավորված է եղել տվյալ տարիների կարկտահարության և վաղ գարնանային ցրտահարության հետևանքներով: 2015թ. բուսաբուծության ճյուղի տնտեսական աճը կազմել է 15.2 %:

Ընդհանուր վերցրած մշակաբույսերի ցանքատարածությունների փոփոխության միտումների մասին պատկերացում են տալիս ստորև ներկայացված տվյալները:

ՀՀ ցանքատարածությունների փոփոխության միտումները 2010-2015թթ.

(հազ. հա)

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Ընդամենը ցանքատարածություն-ները, այդ թվում՝	283.6	286.7	304.2	318.1	332.8	351.8
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	159.3	157.8	172.2	178.4	188.7	201.2
այդ թվում՝ ցորեն	87.6	77.8	93.7	99.7	106.4	113.1
Կարտոֆիլ	28.4	28.7	31.2	30.7	31.6	33.3
Բանջարեղեն	23.5	25	25.2	25.4	26.4	29.1
Բոստանային մշակաբույսեր	4.5	5.8	5.1	5.4	5.8	6.8
Կերային մշակաբույսեր	65.5	66.3	66.9	74.7	77.1	78.8
Տեխնիկական մշակաբույսեր	2.4	3.2	3.5	3.5	3.2	3.1

2010-2015թթ. ցանքատարածությունների ավելացման 61.4 %-ը պայմանավորված է եղել հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի տարածքների ավելացմամբ, այդ թվում՝ ցորենի հաշվին ապահովվել է ցանքատարածությունների ընդլայնման 37.4 %-ը: Դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել է նաև մնացած բոլոր մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնում:

Վերջին տարիներին գյուղատնտեսությունում առկա բազմաթիվ խնդիրների լուծմանն են ուղղվել պետական աջակցության մի շարք ծրագրեր:

Հակիրճ անդրադառնանք դրանցից հիմնականներին:

Հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանը, ցորենի ինքնաբավության մակարդակի բարձրացմանն է ուղղվել **«Ցորենի սերմանաբուծության և սերմարտադրության զարգացման»** ծրագիրը, որի

շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից ներկրված աշնանացան ցորենի բարձր վերարտադրության սերմացուներով, մատչելի պայմաններով, բավարարվել է հանրապետության մարզերի ամբողջական պահանջարկը:

Հացահատիկային տնտեսության, կերարտադրության զարգացմանն է ուղղվել նաև 2011 թվականից իրականացվող **«Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման»** ծրագիրը: Վերջինիս շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից ներկրված գարնանացան գարու, եգիպտացորենի, կորնգանի և առվույտի բարձր վերարտադրության սերմերով բավարարվել է հանրապետության մարզերի ամբողջական պահանջարկը շուկայականից շուրջ 50.0 %-ով ցածր գներով:

Ընդհանուր առմամբ, սերմնաբուծության, սերմապահովության բնագավառում իրականացված ծրագրերը, հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման հետ մեկտեղ, նպաստել են հացահատիկային տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը: Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները 2015 թվականին գերազանցել են 2010 թվականի մակարդակը 95.4 %-ով, իսկ բերքատվությունը բարձրացել է շուրջ 54.0 %-ով: Ցորենի արտադրության ծավալները նշված ժամանակահատվածում ավելացել են ավելի քան 2.0 անգամ, իսկ բերքատվությունը՝ 60.4 %-ով: Ծրագրերի իրականացումն իր դրական ազդեցությունն ունեցավ ցորենի ինքնաբավության մակարդակի բարձրացման վրա: Այդ ցուցանիշը 2015 թվականի համար գնահատվում է շուրջ 55.0 %, 2010 թվականի 33.5 %-ի դիմաց:

Առաջնահերթ անհրաժեշտ մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացումը պարենային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից է, և ներկայիս քաղաքականությունն ուղղված է պարենային անվտանգության ապահովման հայեցակարգով նախանշված ցորենի ինքնաբավության մակարդակը 2020 թվականին 65.0 %-ի հասցնելուն:

Բուսաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալների և բերքատվության ցուցանիշները ներկայացվում են ստորև:

ՀՀ բուսաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2010-2015թթ.

(հազ. տոննա)

Մթերքները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Հացահատիկ և հատիկաընդեղենային մշակաբույսեր	326.4	440.7	456.1	548.8	590.5	637.9
այդ թվում՝ ցորեն	183.5	224.1	243.1	311.6	338.2	383.7
Կարտոֆիլ	482.0	557.3	647.2	660.5	733.2	764.5
Բանջարեղեն	707.6	787.1	849.0	876.0	954.6	1031.5
Բոստան	132.5	180.9	205.1	208.1	245.8	286.8
Պտուղ և հատապտուղ	128.1	239.4	331.7	338.1	291.0	386.5
Խաղող	222.9	229.6	241.4	240.8	261.3	309.2

ՀՀ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների բերքատվությունը 2010-2015թթ.

(g/հա)

Մթերքները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Հացահատիկ և հատիկաընդեղենային մշակաբույսեր	20.7	27.9	26.5	30.8	31.8	31.8
այդ թվում՝ ցորեն	21.2	28.8	26.0	31.3	32.3	34.0
Կարտոֆիլ	170.1	194.3	206.7	214.3	232.2	228.9
Բանջարեղեն	294.2	306.7	325.0	333.7	350.5	335.3
Բոստան	296.0	313.8	399.9	388.5	421.4	423.4
Պտուղ և հատապտուղ	39.2	73.5	97.0	95.0	80.8	104.7
Խաղող	151.5	158.0	151.3	149.8	157.7	188.3

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ բացի հացահատիկային մշակաբույսերից արտադրության ծավալների և ինտենսիվացման մակարդակի աճ է գրանցվել այլ հիմնական բուսաբուծական մթերքների համար, ինչը հատկապես ակնհայտ է այգեգործության ճյուղում:

Դիտարկված ժամանակահատվածում էական դրական տեղաշարժեր են գրանցվել **ջերմատնային տնտեսության** բնագավառում: ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներով 2011 թվականին հանրապետության տարածքում շահագործվում էր շուրջ 500 հեկտար ջերմատուն, որից նորագույն տեխնոլոգիաներով՝ 1.9 հա: 2016 թվականի հունիսի դրությամբ՝ ջերմատների ընդհանուր տարածքը կազմում է 1220.8 հա, որից նորագույն տեխնոլոգիաներով՝ 100.3 հա, այդ թվում՝ 14.9 հեկտարը շահագործման են հանձնվել 2016 թվականի տարեսկզբին:

Նոր կառուցված բոլոր ջերմատները հիմնականում հագեցված են եվրոպական երկրների արտադրության նորագույն տեխնոլոգիական սարքավորումներով ու ավտոմատացված կառավարման համակարգերով, և բույսի աճեցման տեխնոլոգիական բոլոր շրջափուլերը (ջեռուցում, պարարտացում, ածխաթթու գազով հարստացում, հնարավոր հիվանդությունների կանխարգելում և այլն) և այլ գործընթացները կառավարվում են ավտոմատացված համակարգերի միջոցով: 2016 թվականին նախատեսվում է կառուցել ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած շուրջ 50 հա հեկտար ջերմատներ:

Վերջին տարիներին իրականացվել և ներկայումս էլ շարունակվում են գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական նյութական ռեսուրսների մատչելիության բարձրացման միջոցառումները: Դրան են ուղղվել <<**Հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության**>> ծրագրերը: Այդ ծրագրերի շրջանակներում մարզերի կողմից ներկայացված պահանջարկին համապատասխան, շուկայականից 40-50 % ցածր գներով, ներառյալ փոխադրման ծախսերը, տնտեսավարողներին մատակարարվել է ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, ինչպես նաև՝ շուկայականից էականորեն ցածր գներով՝ դիզելային վառելանյութ:

Ծրագրերը նպաստել են գյուղատնտեսական աշխատանքների ագրոտեխնիկական պահանջների կատարմանը, ցանքատարածությունների ավելացմանը:

Գյուղատնտեսության կայունության և մրցունակության բարձրացման համար կարևոր է համարվում վարկային ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացումը: Վերջինիս նպաստել է 2011 թվականից մեկնարկած «**Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման**» ծրագիրը:

Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան ոլորտին տրամադրվում են մատչելի՝ 14 % տոկոսադրույքով, հայկական դրամով վարկեր, որի 6 տոկոսային կետը սուբսիդավորվում է պետության կողմից:

2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2016 թվականի առաջին կիսամյակի վերջն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 91.5 միլիարդ դրամի ընդհանուր գումարով, ավելի քան 109.5 հազ. միավոր վարկ: Նշված ժամանակահատվածում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ընդհա-

նուր գումարը կազմել է 4.03 մլրդ դրամ: 2016 թվականի համար ծրագրի առաջին փուլն ավարտված է, երկրորդ փուլը կմեկնարկի աշնանը:

Անասնաբուծություն

2010-2015թթ. անասնաբուծության համախառն արտադրանքի արժեքի, արտադրության ծավալի ինդեքսի և գյուղատնտեսության մեջ դրա տեսակարար կշռի վերաբերյալ տվյալները ներկայացվում են ստորև:

ՀՀ անասնաբուծության համախառն արտադրանքի (ընթացիկ գներով) արժեքի, արտադրության ծավալի ինդեքսի և գյուղատնտեսության մեջ դրա տեսակարար կշռի 2010-2015թթ. ցուցանիշները

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Անասնաբուծություն, մլրդ դրամ	244.0	329.9	325.5	346.3	387.6	396.0
Տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի մեջ, %	38.3	41.5	38.7	37.7	39.0	39.5
Անասնաբուծության ծավալի ինդեքսը, %	100.3	100.1	103.2	107.8	107.8	106.1

Ներկայացված տվյալներից երևում է, որ անասնաբուծության համախառն արտադրանքի արժեքը ընթացիկ գներով 2010թ.-ի 244.0 մլրդ դրամից 2015թ. հասել է 396.0 մլրդ դրամի: Դիտարկված վերջին տարիներին անասնաբուծության տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի կառուցվածքում միջին հաշվով կազմել է 39.1 %: 2010-2015թթ. ընդգրկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին գրանցվել է անասնաբուծության ճյուղի ծավալների ավելացում, ընդ որում վերջին երեք տարիներին եղել է առավել բարձր (միջինը 7.2 %):

Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև անասնագլխաքանակի ավելացման ուղղությամբ: Վերջինիս փոփոխության միտումները (տարեսկզբի դրությամբ) ներկայացվում է ստորև:

ՀՀ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը 2011-2016թթ. (հունվարի 1-ի դրությամբ)

(հազ.գլուխ)

Գյուղատնտեսական կենդանիներ	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Խոշոր եղջերավորներ	571.4	599.2	661.0	677.6	688.6	701.5
այդ թվում՝ կովեր	272.6	283.3	303.3	309.6	313.9	318.6
Մանր եղջերավորներ	532.5	590.2	674.7	717.6	745.8	778.1
Խոզեր	114.8	108.1	145.0	139.8	142.4	174.8
Թռչուններ	3462.5	4023.5	4050.0	4101.2	4145.5	3942.8

Դիտարկված ժամանակահատվածում բոլոր գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, բացառությամբ խոզերի գլխաքանակի որոշակի տատանումների, ունեցել է աճի միտում, մասնավորապես խոշոր եղջերավորների 2016թ. տարեսկզբի ցուցանիշը գերազանցում է 2011թ. ցուցանիշին 22.7 %-ով, իսկ մանր եղջերավորներինը՝ 46.1 %-ով:

Անասնապահության ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացումը և անասնագլխաքանակի ավելացումը հնարավորություն են տվել ապահովելու անասնապահական մթերքների ծավալների աճ: Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները ներկայացվում են ստորև:

ՀՀ-ում անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2010-2015թթ.

Մթերքները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	124.3	127.9	130.3	146.8	163.3	176.1
Կաթ, հազ. տոննա	600.9	601.5	618.2	657.0	700.4	728.6
Ձու, մլն հատ	702.2	633.6	658.1	615.2	641.8	659.8

Դիտարկվող 2010-2015թթ. ընկած ժամանակահատվածում մսի արտադրության ծավալների աճը կազմել է 41.7, իսկ կաթինը՝ 21.3 %:

Գյուղատնտեսության ոլորտում անասնաբուծության խթանմանն են նպաստել վերջին տարիներին իրականացվող մի շարք ծրագրեր, որոնցից է մասնավորապես, **«Տավարաբուծության զարգացման ծրագիրը»:** Վերջինիս շրջանակներում եվրոպական երկրներից հանրապետություն է ներկրվել շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի 2067 գլուխ տոհմային երինջ, որոնք մատչելի՝ տարաժամկետ վճարման պայմանով հատկացվել են հանրապետության անասնապահական տնտեսություններին: Ստացվել են բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված, տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող բարձրարժեք տոհմային հորթեր, որոնց զգալի մասը վաճառվել է հանրապետության գյուղացիական տնտեսություններին: Մի շարք ընկերություններում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 7-8 հազար կգ կաթ, որը ավելի քան 3 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը:

Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու, մսի և մսամթերքի անվտանգությունն ապահովելու, շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու, ինչպես նաև բնակավայրերում և ճանապարհամերձ տարածքներում կենդանիների մորթը նվազագույնի հասցնելու նպատակով՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից

«Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում հանրապետության 4 մարզի (ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Վայոց ձորի) 5 համայնքներում կառուցվել և շահագործման են հանձնվել սպանդանոցներ: Ներկայումս աշխատանքներ են տարվում սպանդանոցների բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի իրականացվում է կենդանիների 7 վարակիչ հիվանդությունների կանխարգելման և 3 հիվանդությունների ախտորոշման անասնահակահամաճարակային շուրջ 9.0 մլն միջոցառում, որի արդյունքում հանրապետությունում ապահովվել է կայուն անասնահամաճարակային վիճակ:

Անասնապահության զարգացման համար առանձնակի կարևորվում են <<**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության**>> Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առաջին և երկրորդ ծրագրերը: Առաջին ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին և ընդգրկում է հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի գյուղական համայնքները, որտեղ բնակչության հիմնական գործունեությունը անասնապահությունն է: Երկրորդ ծրագիրը մեկնարկել է 2015թ. և վերը հիշատակված մարզերի հետ մեկտեղ այն ներառում է նաև Վայոց ձորի և Տավուշի մարզերը:

Ծրագրերի հիմնական նպատակն է անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին աջակցությունը՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավման բնագավառներում:

Ծրագրի առանցքային դրույթներից է նաև գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը և դրանց գործունեությանը նպաստելու միջոցով անասնապահական մթերքների արտադրողից մինչև սպառող շղթայի օղակներում առկա խնդիրների համակարգված լուծումը, արդյունքում՝ անասնապահության ճյուղում առավել բարձր ավելացված արժեքի ստացումը և անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացումը:

Նշված խնդիրների լուծման ուղղությամբ ծրագրի իրականացման տարիների ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- առաջին ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվել 81 համայնքում, իսկ երկրորդ ծրագիրը ներկայումս ներառում է 111 համայնք: Նշված համայնքները ընդգրկում են 280 հազ. բնակչություն, 295 հազ. հա արոտավայրերով (հանրապետության ընդհանուր արոտների շուրջ 28.0 %-ը) և 190 հազ. պայմանական անասնագլխաքանակ (հանրապետության ընդհանուր անասնագլխաքանակի շուրջ 26.0 %-ը),

- հիմնադրվել է <<Արոտօգտագործողների միավորում>> 168 սպառողական կոոպերատիվ՝ անասնապահությամբ զբաղվող ավելի քան 21.0 հազ. անդամ տնտեսություններով,

- արոտների կայուն կառավարման նպատակով 137 համայնքում ներդրվել են հերթափոխային արածեցման սխեմաներ,

- կառուցվել է շուրջ 225 կմ ջրարբիացման համակարգ, տեղադրվել է 268 խմոց,

- օգտագործելի են դարձել նախկինում չօգտագործվող կամ թերի օգտագործվող 147.0 հազ. հա արոտներ,

- <<Արոտօգտագործողների միավորում>> կոոպերատիվների տրամադրվել է շուրջ 930 միավոր գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորում, որից շուրջ 200 միավորը՝ տրակտոր:

Ծրագրերի իրականացման արդյունքում կովերի կաթնատվությունը բարձրացել է 33.8, իսկ մանր եղջերավորներինը՝ 25.7 %-ով, խոշոր եղջերավորների քաշաճը ավելացել է 24.0, իսկ մանր եղջերավորներինը՝ 23.0 %-ով: Մսուրային շրջանի համար անասնակերի ապահովվածությունը բարձրացել է 88.0 %-ով: Արոտների արդյունավետ կառավարումից համայնքային բյուջե մուտքագրված գումարները ավելացել են 98.9 %-ով:

Կառուցվել են անասնաբուժական սպասարկման կենտրոններ ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան, ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ և ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքներում: ՀՀ Տավուշի մարզի Բերդ և ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքների անասնաբուժական սպասարկման կենտրոնների կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Իրականացվել է «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» ՀՀ 10 մարզում, որի շրջանակներում հայտարարվել է 7 փուլի մրցույթ: Ներկայացված 224 հայտերից ֆինանսավորվել է 69 ծրագիր:

«Արժեշղթայի զարգացում» բաղադրիչի առաջին փուլի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 14 ենթածրագրերի շահառուների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, և իրականացվում են ենթածրագրերով նախատեսված գործառույթները: Մեկնարկել է տվյալ բաղադրիչի երկրորդ փուլը:

Նշվածի հետ մեկտեղ գյուղական համայնքներում իրականացվում են նաև՝ «**Բույսերի պաշտպանության**», «**Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների**», «**Գյուղական խորհրդատվական ծառայությունների**» և այլ ծրագրեր:

2010-2015 թվականներին, ինչպես նշել էինք, էական դրական տեղաշարժեր են գրանցվել գյուղատնտեսական ծագման արտադրանքի արտաքին ապրանքաշրջանառության ուղղությամբ: 2015 թվականին արտահանված արտադրանքի արժեքը կազմել է 390.2 մլն ԱՄՆ դոլար, 2010թ. 170.4 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: Տվյալ ժամանակահատվածում պարենամթերքի գների ինդեքսը հաշվի առնելով՝ գյուղատնտեսական ծագման արտադրանքի արտահանման աճը կազմում է 1.8 անգամ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով 2016թ. հուլիսի 11-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 73.2 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 41.7 հազ. տոննայի դիմաց (աճը կազմել է 75.5 %): Ընթացիկ տարում թարմ բուսաբուծական մթերքների արտահանումների շուրջ 85.0 %-ը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությանը:

Ներկայումս կարելի է փաստել, որ գյուղատնտեսությունում կայունությանն բնորոշ իրավիճակ է, և առաջիկա հիմնախնդիր է զարգացման փուլին անցումը՝ ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի կենսագործման ճանապարհով: Առաջնահերթ է համարվում միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում արդիական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ կաթիլային ոռոգման, կարկտապաշտպան ցանցաշերտերի ներդրման, հանրապետությունում այդ տեխնոլոգիական սարքավորումների արտադրության կազմակերպման, ջերմատնային և ձկնաբուծական տնտեսություններում ռեսուրսախնայող տեխնոլոգիաների կիրառման և այլ միջոցառումների իրականացումը:

2015թ. մեկնարկել է Եվրամիության արևելյան համագործակցության «Գյուղի և գյուղատնտեսության զարգացման» ծրագիրը, որի կարևորագույն բաղկացուցիչներից է կոոպերացիայի խթանումը և գյուղատնտեսությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը:

Գյուղատնտեսությունում գրանցված դրական տեղաշարժերը որոշակիորեն արդյունք են նաև վերջին տարիներին ոլորտի նկատմամբ կիրառվող բարենպաստ հարկային քաղաքականության:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների՝ տոհմային կենդանիների, սերմացուների, տնկանյութի, տնկիների, պարարտանյութերի, թունաքիմիկատների, գյուղատնտեսական տեխնիկայի, այդ թվում՝ տրակտորների և կոմբայնների, ինչպես նաև ջերմոցային կոնստրուկցիաների, ջերմատնային արտադրությունում օգտագործվող հիմնական նյութերի ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից: Նշվածի հետ մեկտեղ, վերը թվարկված այդ կարևորագույն ռեսուրսների մեծ մասի ներքին շրջանառությունը նույնպես ազատված է ավելացված արժեքի հարկի վճարումից:

Հիշատակվածի հետ մեկտեղ գյուղատնտեսության ոլորտում դեռևս ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որոնց համակարգված լուծման համար, նախադրյալների ստեղծման նկատառումներից ելնելով, մշակվել է ՀՀ գյուղատնտեսության 2016-2025թթ. կայուն զարգացման ռազմավարության նախագիծը: Շատ հակիրճ, նախագծի հիմնական դրույթները հետևյալն են:

Ռազմավարության նախագիծը, ընդհանուր առմամբ, ամրագրում է առաջիկա տասնամյակում ագրարային ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Նախագծով սահմանվել է ռազմավարության հիմնական նպատակը, այն է՝ <<Գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման, ոլորտում նպատակային քաղաքականության լծակների կիրառման միջոցով՝ նպաստել ճյուղի արդիականացմանը, մրցունակության և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը>>:

Նշված հիմնական նպատակին համարժեք սահմանվել են դրանից բխող **ենթանպատակները** (թվով 13):

Նպատակին և ենթանպատակներին համահունչ սահմանվել են **ռազմավարության հիմնական խնդիրները,** որոնց շրջանակը բավականին լայն է (թվով 17 խումբ):

Ռազմավարության նախագծի առանցքային մաս են կազմում ռազմավարության հիմնական ուղղությունները:

Ըստ նախանշված խնդիրների՝ շատ հակիրճ դիտարկենք դրանցից մի մասի **լուծման ուղղությունները:**

1. Առաջին խնդիրը դա՝ **<u>Ագրարային ոլորտում տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի զարգացումն ու գյուղացիական տնտեսությունների խոշորացման խթանումն է</u>:**

Ռազմավարության նախագծով տնտեսավարման ձևերից ներդրման համար առավել ընդունելի և առաջնահերթ են համարվել կոոպերատիվների ստեղծման խթանումը և կոոպերացիայի զարգացումը, ինչը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով.

- Օրենսդրական հիմքերի կատարելագործումը և համալրումը:

Նշվածին էր ուղղված 2015թ. տարեվերջին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը:

- Տնտեսավարման ձևերի, մասնավորապես կոոպերատիվների տնտեսական խթանման և կայունության ապահովման համար պետական աջակցության մի շարք գործիքների կիրառումը:
- Կոոպերատիվների սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը (նախագծով սահմանվել է վերջինիս իրականացման անհրաժեշտ քայլերի շրջանակը):
- Գյուղատնտեսությունում կոոպերատիվների ստեղծումը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման քայլերի ձեռնարկումը:

Փորձ է արվել ներկայացնել նաև գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը խոչընդոտող գործոնների հաղթահարման հնարավորությունները, որի համար սահմանվել են հետևյալ սկզբունքները՝

- կամավորությունը,
- սեփականատերերի իրավունքների երաշխավորումը,

- սեփականատերերի տեղեկատվական մատչելիության և գործընթացի թափանցիկության ապահովումը:

2. Նախագծով սահմանված խնդիրներից է նաև **<u>Պարենային ապահովության (անվտանգության) մակարդակի բարձրացումն ու հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովումը</u>: Դրա հիմնական ուղղություններից են.**

- կենսականորեն կարևորագույն պարենամթերքների, մասնավորապես՝ հացամթերքի, բուսական յուղի, շաքարի, մսի, ձկան տեղական արտադրության խթանումը և սահմանված կարգով չնվազեցվող պաշարների ձևավորումը: Անասնապահական մթերքների ծավալների ավելացման նպատակով կերային բազայի հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես՝ առավել արդյունավետ կերային մշակաբույսերի (եգիպտացորեն, կերի ճակնդեղ, գետնախնձոր, ոչ ավանդական համարվող մշակաբույսեր և այլն) մշակության նոր տեխնոլոգիաների ներդրման տեխնիկական աջակցությունը և խորհրդատվության ապահովումը: Բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման համար պայմանների ստեղծումը:

3. Նախագծով որպես խնդիր է դիտարկվել **<u>Բնատնտեսական գործոններով և պահանջարկով պայմանավորված գոտիական նախընտրելի մասնագիտացման նպաստումն և արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը:</u>**

Ազատական տնտեսության պայմաններում այս գործընթացները հիմնականում կարգավորվում են շուկայական գործոններով, սակայն, նկատի ունենալով հիմնախնդրի ռազմավարական նշանակությունը, պետությունը տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում ուղղակիորեն և անուղղակիորեն տարբեր գործիքների կիրառմամբ կարող է նպաստել արտադրության մասնագիտացմանը և ռացիոնալ տեղաբաշխմանը:

Գյուղատնտեսության բնատնտեսական ներուժի առավել արդյունավետ օգտագործման նպատակով, այդ ներուժի հնարավորությունների գնահատման հիման վրա, ռազմավարության նախագծով ներկայացվում են հանրապետության մարզերի հեռանկարային նախընտրելի մասնագիտացման ուղղությունները: Վերջինս ուղենիշային պետք է լինի նպատակային քաղաքականության իրականացման համար:

Նախագծով նախանշվել են նաև հեռանկարային նախընտրելի մասնագիտացման ապահովման քաղաքականության հիմնական գործիքները:

4. Ռազմավարության նախագծով նախատեսված խնդիրներից է **Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին հասցեական աջակցության (սուբսիդավորման) մեխանիզմների կատարելագործումը:**

Գյուղատնտեսության հասցեական աջակցությունը պետք է նպատակաուղղված լինի ռազմավարությունով նախանշված մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես՝

- պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը,
- հողային ռեսուրսների նպատակային օգտագործման վիճակի բարելավմանը,
- գյուղատնտեսության նախընտրելի մասնագիտացման խթանմանը,
- արդիական տեխնոլոգիաների ներդրմանը,
- գյուղատնտեսության զարգացման համար պայմանների համահարթեցմանը,
- տնտեսավարման ձևերի զարգացման խթանմանը և այլն:

Ռազմավարության նախագծով նշված խնդիրների լուծման համար առաջադրվել են հասցեկան աջակցության մի շարք մեխանիզմներ:

5. Ռազմավարությունով առաջադրված խնդիրներից է **<u>Սննդամթերքի անվտանգության միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրումը.</u>**

Սննդամթերքի անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչներից է համարվել գյուղացիական տնտեսությունների կողմից սննդամթերքի անվտանգության չափանիշների ապահովումը: Նախագծով սահմանվել է վերջինիս իրականացման պահանջների շրջանակը:

Տվյալ խնդրի լուծման բաղադրիչներից է նաև պարենամթերք արտադրող տնտեսավարող սուբյեկտների կողմից սննդամթերքի անվտանգության ապահովումը, մասնավորապես նախագծով սահմանվել է հումքի ընդունումից մինչև վերջնական պատրաստի արտադրանքի իրացման գործընթացում անվտանգության ապահովման վերահսկման համակարգերի և ստանդարտների ամբողջությունը:

6. Ռազմավարության նախագծով առաջադրված խնդիրներից է նաև **<u>Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի և արդյունավետության բարձրացումը:</u>**

Տվյալ խնդրի լուծումը պայմանավորված է գյուղատնտեսության ճյուղի ինտենսիվացման հիմնական գործոններով: Մասնավորապես, ռազմավարության համատեքստում ուշադրություն է դարձվել հետևյալ միջոցառումների իրականացմանը՝

- ոռոգման համակարգի և հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանը,

- բնական կերահանդակների բարելավմանը և ջրարբիացմանը,
- Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալված հողերի արմատական բարելավմանը,
- սերմերով ապահովվածության և ռեսուրսների մատակարարման մատչելի մեխանիզմների կիրառմանը:

Ռազմավարության նախագծով սահմանվել են նաև հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման այլ ուղղություններ:

7. Ռազմավարությունով դիտարկված հիմնական խնդիրներից է **<u>Բուսաբուծության ճյուղի զարգացումը</u>:**

Նախագծով նախանշվում է, որ բուսաբուծությունը հանդիսանալու է հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղը, որը շարունակելու է իր առանձնակի կարևոր տեղն ունենալ երկրի պարենային ապահովության, գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի օգտագործման, միջճյուղային փոխանակման, ճյուղում զբաղվածության ապահովման ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ձևավորման գործում:

Ռազմավարության շրջանակներում սահմանվել է բուսաբուծության ճյուղի զարգացման գերակայությունները, որոնցից մասնավորապես առանձնացվում են՝

- առաջնային սերմնաբուծության զարգացման, բարձրորակ սերմերով ապահովվածության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը,
- մշակության ագրոտեխնիկական պահանջների ապահովման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, բերքի որակական հատկանիշների բարելավումը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը,
- այգեգործության զարգացման արժեշղթայի ստեղծումը, ինտենսիվ այգեգործության զարգացման խթանումը,
- ջերմատնային տնտեսության զարգացման խթանումը,
- վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը:

Ռազմավարությունով տրվել են բուսաբուծության ճյուղի հիմնական կանխատեսումային ցուցանիշները՝ 2016-2025 թվականները ընկած ժամանակահատվածում:

Նախագծով սահմանվել է բուսաբուծության ճյուղում կանխատեսվող մակարդակի ձեռքբերման ռազմավարական տարբեր ուղղություններ:

8. Ռազմավարության հաջորդ հիմնական խնդիրը դա **<u>Անասնաբուծության ճյուղի զարգացումն է:</u>**

Նախագծով նախանշվում է, որ անասնաբուծությունը գյուղատնտեսության հիմնական ճյուղերից է, այն ցածր ռիսկայնության, առկա բնատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության գենետիկական ներուժի լիարժեք դրսևորման շնորհիվ կարող է դառնալ որոշիչ գործոն երկրի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների էական ընդլայնման, պարենային ապահովության մակարդակի բարձրացման և գյուղական ազգաբնակչության եկամուտների ավելացման գործընթացներում:

Ռազմավարության շրջանակներում սահմանվել են անասնաբուծության ճյուղի զարգացման գերակայությունները, որոնցից մասնավորապես առանձնացվում են՝

- թարմ կաթի և կաթնամթերքների, ոչխարի մսի և ձվի նկատմամբ հանրապետության ներքին շուկայի պահանջարկի ամբողջական, տավարի մսի նկատմամբ ավելի քան 90, խոզի մսի՝ շուրջ 80, իսկ թռչնի մսի՝ ավելի քան 50 տոկոսով ապահովում,
- բարձր մթերատու հատկանիշներ ունեցող կաթնատու, կաթնամսատու և մսատու ուղղության գյուղատնտեսական տոհմային կենդանիների սերմնահեղուկով արհեստական սերմնավորման, դրանց ներմուծման միջոցով տեղական ցեղերի բարելավում,
- կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնման, դրանց կառուցվածքի բարելավման, բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման միջոցով անասնակերերի ստացման սեփական հնարավորությունների լիարժեք օգտագործում:

Հանրապետության պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և գյուղական աղքատության հաղթահարմանը կնպաստի մեղվաբուծության և ձկնաբուծության զարգացումը, հետևաբար նախագծով առաջարկվում է դրանց աջակցության մեխանիզմներ:

Վերոնշյալ և նախագծում նշված այլ գերակայությունները և զարգացման միտումները հիմք ընդունելով, կանխատեսվել են անասնաբուծության հիմնական ցուցանիշները 2016-2025 թվականների համար:

Նախագծով սահմանվել է կանխատեսվող մակարդակի ձեռքբերման ռազմավարության ուղղությունները, որոնք տարբերակվել են՝

- տոհմային անասնաբուծության զարգացման,
- կերարտադրության, կերակրման և պահվածքի բարելավման,
- անասնաբուժական համակարգի բարելավման և անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացման:

9. Նախագծի հիմնական խնդիրներից է **<u>Գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի զարգացումը</u>:**

Ռազմավարությունով նախանշվում է, որ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը և ագրարային ոլորտի զարգացման շարժիչ ուժը:

Սահմանվել է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացման ռազմավարական բազմաթիվ ուղղություններ, որոնք տարանջատվել են՝

- գյուղատնտեսական մթերք վերամշակող կազմակերպությունների տնտեսական գործունեությունը խթանող օրենսդրական բարեփոխումների,
- գյուղատնտեսական մթերքի վերամշակման ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրության և արտադրանքի փորձարկման մեթոդները սահմանող Հայաստանի ստանդարտների՝ միջազգային պահանջներին համապատասխանեցման,
- գյուղատնտեսական հումքի գնման կազմակերպման գործընթացի, գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների արմատավորման ուղղությամբ:

Ռազմավարությունով սահմանվել են նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգի պետական աջակցության ուղղությունները:

Նախագծով տրված է գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության հիմնական արտադրական ցուցանիշների կանխատեսումները՝ մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածի համար:

10. Որպես առանձին խնդիր է դիտարկվել՝ **<u>Ագրարային ոլորտի վարկավորման բարելավումը</u>:**

Ռազմավարությունը նախանշում է, որ գյուղատնտեսական վարկերի հասանելությունը և առկա միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու առավել արդյունավետ միջոց է բանկային համակարգում գյուղատնտեսական վարկավորման տեսակակար կշռի ընդհանուր բարձրացումը, որին հասնելու ռազմավարական տարբեր ուղղությունները նախատեսված է իրականացնել ըստ փուլերի (առաջին փուլը ընդգրկում է մինչև հինգ տարի, երկրորդ փուլը մինչև տաս տարի ժամանակահատված):

11. Դիտարկված խնդիրներից է նաև **<u>Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավումն և զարգացումը:</u>**

Սահմանվել են տվյալ ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները, որոնցից հիմնականներն են՝

- գյուղատնտեսության ոլորտի տեղեկատվության, խորհրդատվության, գիտական և կադրային ապահովման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ պետական աջակցության քաղաքականության շարունակումը,
- ուսումնական համակարգի հետևողական բարեփոխումներով՝ արդիական տեխնոլոգիաներին իրազեկ, աշխատանքի շուկայում մրցունակ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման ապահովումը: Այս բնագավառում իր առաջնակարգ դերն է ունենալու Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, որը կադրեր է պատրաստում 36 մասնագիտություններով, սակայն դեռևս խնդիր է աշխատանքի շուկայում շրջանավարտների պահանջարկի բարձրացումը,
- անհրաժեշտ է ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում՝ գյուղատնտեսության մեջ գիտական, ուսումնական և խորհրդատվական կառույցների ինտեգրման միջոցով, ինչը կամրապնդի գիտության կապը գյուղատնտեսության և ագրովերամշակման ոլորտների տնտեսվարողների միջև:

12. Ռազմավարության նախագծով որպես եզրափակիչ խնդիր է դիտարկվել՝ **<u>Ագրարային ոլորտում քաղաքականության վարման գործընթացում գենդերային խտրականության բացառումը</u>:**

Կիրառվող քաղաքականությունը նպաստելու է ագրարային ոլորտում գենդերային անհավասարության, մասնավորապես սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում կանանց նկատմամբ խտրականության դրսևորումների հաղթա-

հարմանը: Ռազմավարությունով նախանշված են գենդերային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Նախագծում առանձին բաժնով ներկայացված է **Գյուղատնտեսության պետական կարգավորման** դրույթները:

Նախանշված է ռազմավարության խնդիրների լուծման շրջանակներում պետության կողմից գյուղատնտեսության կարգավորման գործառույթների շրջանակը, որոնցից են՝

- աջակցություն արտադրության խոշոր ինժեներական (մելիորացիա, ոռոգում, ցամաքուրդային համակարգ, հակահեղեղային միջոցառումներ, ջրարբիացում, ճանապարհաշինություն և այլն) և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը,
- օրենսդրական հիմքերի ստեղծում, ազատ մրցակցության ապահովում,
- գյուղատնտեսական հողերի մոնիտորինգ և պահպանություն,
- առաջնային սերմնաբուծություն, տոհմային գործի զարգացում և մի շարք այլ գործառույթներ:

Նախագծի մեկ այլ բաժնով ներկայացված է **Ռազմավարության իրականացումից ակնկալվող արդյունքները:**

Ռազմավարության իրականացումից ակնկալվում է հանրապետության ագրարային ոլորտի կայունության ապահովում և զարգացում, որը կդրսևորվի տնտեսական և սոցիալական հետևյալ արդյունքներով.

- 2025թ. գյուղատնտեսական արտադրության ծավալը 2011-2014 թվականների միջին մակարդակը կգերազանցի շուրջ 80.7 տոկոսով.
- գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը կդրսևորի կրճատման միտում և համախառն արտադրանքի ավելացումը կապահովվի աշխատանքի արտադրողականության ավելացման հաշվին.
- գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը 2025թ. կհասնի 74-77 տոկոսի, որը հնարավորություն կտա էականորեն ավելացնել գյուղատնտեսությունում տնտեսավարողների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները.
- 2025թ. ցանքային տարածքը կհասցվի 416.3 հազ. հա, որը կգերազանցի 2011-2014 թվականների միջին մակարդակը շուրջ 34 տոկոսով.

- կբարձրանա հանրապետության բնակչության պարենային անվտանգության մակարդակը, զգալիորեն կավելանա կարևորագույն պարենամթերքների տեղական արտադրության հաշվին ապահովվածությունը, կբարելավվի գյուղատնտեսական ծագման արտադրանքների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշիռը, կավելանան գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտները:

Ռազմավարության նախագծի եզրափակիչ բաժնում ներկայացված է **Ռազմավարության իրականացման կառավարման և մոնիթորինգի հարցերը:**

Ռազմավարության կառավարումն իրականացվելու է գյուղատնտեսության նախարարության և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ընդգրկված պետական կառավարման այլ մարմինների կողմից:

Ռազմավարության դրույթների և դրանց կատարումն ապահովող միջոցառումների ցանկն ուղենիշային են լինելու գյուղատնտեսության ճյուղում միջնաժամկետ ծախսերի ծրագրի, բյուջետային ֆինանսավորման տարեկան հայտերի ներկայացման և ոլորտում այլ նպատակային ծրագրերի իրականացման համար:

Նախագծում ներառված է նաև ռազմավարության մոնիթորինգի իրականացման ընթացակարգը:

Ռազմավարության նախագծի կարևորագույն մաս է կազմում վերջինիս կատարումն ապահովող միջոցառումների ցանկը, որն ընդգրկում է թվով 37 միջոցառում, իր նպատակի բնութագրով, ակնկալվող արդյունքով, արդյունքների գնահատման ցուցանիշներով, իրականացման ժամկետներով, ֆինանսավորման աղբյուրներով և 1 տարվա համար պահանջվող ֆինանսական գնահատականով (շուրջ 41.0 մլրդ դրամ): Միջոցառումների նախագիծը ներկայացված է տարանջատված ութ բաժիններով:

Գյուղատնտեսությունում դեռևս առկա բազմաթիվ խնդիրներն իրենց հնարավոր լուծումները պետք է ստանան ռազմավարության շրջանակներում իրականացվող պետական աջակցության, պետություն-մասնավոր հատված և միջազգային կազմակերպությունների համագործակցության ծրագրերի իրականացման արդյունքում: